

Ա.

Վաղորդայն

Ու մըրութեան մէջ հիմա ես հսկողն եմ խստադէմ,
Մըռայլ՝ ինչպէս դէմքը մեր տառապանիքն երկարէ.
Բարձրացուցած աշխերուս աղեղն ահա ես կ'ուղղեմ
Ճամբաներուն ուրկէ յաղը պիտի անցնի կամքը մեր:

Թաւալզըլոր շարժերու ու մեկնումի ազդարար
Երիվարներ հոգիէս կը վըրբնչեն անհամբեր.
Հոս՝ բանակներ քաղցարշաւ, հորիզոններու տեսնահար
Խաւարին մէջ՝ կը շարժին, կը պրկըւին, կը լենան...

— Հիմա լոյսեր հըրացայտ ուղեղներէն կը ժայթքին,
Բազմապատիկ կը նետուին միլիոններու հոգւոյն մէջ,
... Գիշերը բո՛րը է հիմա, — այգահանդէսն է արդէն...

Ցըցած ահա դէպի վեր, որպէս խոյանի տեսնավար,
Բազուկներուս ու ճայնիս ազդանըշանն անդրադարև,
Ես կը բալեմ գոհուելու յաղքանակի մը համար:

Բ.

Ծանր ժամ

Ներքնաշխարհէս անծանօթ քերաստուերներ կը բալեն
Փոքորկավար ջուրերու հայելիներ ինչպէս խոր...
Ես մինակ եմ ու հազա՞ր, միլիոններու մէջ երկնող,
Ես՝ միաւոր գերազոյն, կեդրոնաձիգ կէտ մը նոր:

Ու անծանօթ հոգիներ գալարումին վրայ հանուր
Երենց սրտին կը հեղուն բորք բաժակներն ու կուլան...
Հոն՝ կամուրջներ մըրքասխող կը ծալլըւին՝ սարսրուծ
Ու դառնակոծ խնդութեամբ կը պարեն դողը մահուան:

Բեռնաւոր կա՛ռք մըն ես դուն՝ հանգըրւանէ հանգըրւան
Տանող խաւարն իր ընդհարշ, հըպարտութեամբ ու սիրով
Ներքին կեանինվ մը վայրազ, գիտակցութեամբ մը
դաժան:

— Հանգըրւանիներն հեռաւոր՝ միա՛կ յոյսերն այս
համբուն. . . . —
Ու մէ՛կ յոյսէ դէպի նոր յոյսեր լըռիկ մեկնումն այս՝
Ընթացող կեա՛նիդ է ամբողջ, ճակատագրիդ ե՛րբն
արքուն:

Գ.

Տեսիլի^(*)

— Մո՛ւր է, ըսիր, չը կա՛յ լոյս. . . Եւ ես ուղին չե՛մ
հանչնար. . .
Տարածութեան մը դիմաց անհունօրէն լայնացող՝
Գուցէ մանո՞ւկ էիր դեռ ու միամի՛տ ու տըկար. . .

Հեռուն հովեր կ'ոռնային, փոքորիկնե՛ր, ուրակա՛ն,
Հեռուն՝ խաւարն իր ափին մէջ կը խեղդէր ամէն լոյս,
Մագիլներով գիշատող բիբերուդ մէջ կուգար ման. . .

Դողդըղացիր: Պայթեցա՛ն մոլորակներ յեղակարծ,
Անջըրպետին մէջ հոգւոյդ՝ հիմնայատակ քանդումներ. . .
Արտասուայեղց կազերու անհուն աշխարհ մը բացուած. . . :

ԲԻՒԶԱՆԴ ԹՕՓԱԼԵԱՆ

1933

(*) Այս երեք քերթուածները քաղուած են Արեւա-
գալ տիտղոսով հատուրէ մը որ ի մօսոյ պիտի հրատա-
րակուի: